



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 10

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ասպիրանտների ատեստացիա:
2. Առկա ուսուցման բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների քննարկում:
3. Պետական քննական հանձնաժողովի նախագահի հաշվետվության և առաջարկությունների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցը նվիրված էր առկա ասպիրանտների ատեստացիային: Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնների վարիչները (պրոֆ. Ա. Աբաջյան և դոց. Վ. Պետրոսյան) գիտխորհրդին տեղեկացրին, որ առկա ասպիրանտներ չունեն:

Լ Ս Ե Ց Ի Ն – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի **Սոսե Փարթուղի Բողոզյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Ս. Բողոզյանն ասպիրանտ է ձևակերպվել 2015-2016 ուստարում, ատենախոսության թեման է «Նոր Ջուղայի գրական-մշակութային կյանքը 17-18-րդ դարերում»: Ատենախոսության համար նյութերը հավաքված են, աշխատանքի կառուցվածքը ճշտված է: Ասպիրանտը տպագրության է հանձնել մեկ հոդված՝ «Միրո մոտիվը Նոր Ջուղայի աշուղական դպրոցում. դրսևորման ձևերը, պատկերային կաղապարները»: Երկրորդ հոդվածն աշխատանքային ընթացքի մեջ է: Ս. Բողոզյանը հանձնել է ինֆորմատիկայի և անգլերենի մի-նիմումները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ատեստավորել **Սոսե Փարթուղի Բողոզյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն – Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ **Սաթենիկ Հարությունի Կարապետյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Ս. Կարապետյանը 2015-2016 ուստարում ձևակերպել է ասպիրանտ, ատենախոսության թեման է «Երգիծանքը արևմտահայ փոքր արձակում»: Ասպիրանտը 2017-2018 թթ. ուսումնական տարում մասնակցել է ԵՊՀ ՈԻԳԸ 5-րդ միջազգային գիտաժողովին (ապրիլի 16-20): Հոդվածը ներկայացվել է ԵՊՀ ՈԻԳԸ ժողովածուի տպագրությանը: Ուսումնառության երեք տարիների ընթացքում ասպիրանտը հանձնել է բոլոր ստուգարքներն ու քննությունները, մասնակցել է համապատասխան մանկավարժական պրակտիկային: Տպագրել է 2 հոդված, ևս մեկը հանձնել է տպագրության:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ատեստավորել **Սաթենիկ Հարությունի Կարապետյանին**:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի առկա ասպիրանտ **Թագուհի Գեղամի Մանուկյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Թագուհի Մանուկյանը 2016 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում)՝ «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Ֆեոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրները» վեպի թարգմանությունը» (թարգմանիչ՝ Կ. Սուրենյան), ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Ռուբեն Սաքապետոյան:

Նշվեց, որ տարաձայնություններ կան գիտական ղեկավարի և ասպիրանտի միջև: Ամբիոնը առաջիկայում կքննարկի նոր ղեկավարի ընտրության հարցը:

Թագուհի Մանուկյանը 2016 - 2017 ուստարում մասնակցել է գիտության փիլիսոփայություն, մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն), տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ, մանկավարժություն և հոգեբանություն պարտադիր, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում ընտրովի դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը և շարադրում է դարձվածային միավորների թարգմանությանը վերաբերող հոդվածը: 2017 թ. սեպտեմբերից դասավանդում է ԵՊՀ-ի Ֆարմացիայի ինստիտուտում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ատեստավորել Թագուհի Մանուկյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն.- Հայ նորագույն գրականության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ **Աննա Միկոյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն. – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Աննա Միկոյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Զարեհ Որբունու պոետիկան» (ղեկավար՝ Բ. Գ. թ., դոցենտ Ս. Գրիգորյան): Նա 2018թ. մասնակցել է ԵՊՀ-ի կողմից նախատեսված ասպիրանտական բոլոր դասընթացներին, հանձնել քննություններ՝ ստանալով պարտադիր և կամընտրական դասընթացներից պահանջվող բոլոր կրեդիտները: Արդեն 2 տարի է, ինչ նա Երևանի պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցում դասավանդում է հայոց լեզու և հայ գրականություն, ասպիրանտուրայի բաժին համապատասխան տեղեկանք ներկայացնելով՝ ստացել է նաև աս-

պիրանտի պրակտիկայի համար նախատեսված կրեդիտները: Ղեկավարի հետ քննարկել է աշխատանքի նախնական ծրագիրը: Զուգահեռաբար սկսել է ուսումնասիրել ֆրանսերեն, այցելում է արխիվներ՝ փաստաթղթերի և փաստական նյութերի ուսումնասիրման նպատակով: Պատրաստում է հոդվածներ առաջիկայում տպագրության ներկայացնելու համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ատեստավորել Աննա Միկոյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի երրորդ տարվա առկա ասպիրանտ **Գրիգոր Շաշիկյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ա. Զրբաշյանը:

Նշվեց, որ Գրիգոր Շաշիկյանը 2017-2018 ուսումնական տարում պատրաստվում է հանձնել մասնագիտական քննությունը: Աշխատում է ատենախոսության շարադրման վրա: 2017 թվականին տպագրել է հոդվածներ «Ժանրի ձևափոխման խնդիրը Ադասի Այվազյանի «Օբյեկտիվ-18» գրքում» /«ՎԷՄ» համահայկական հանդեսում՝ թիվ 3/, «Տեքստի տեսողական ներգործությունը Ադասի Այվազյանի «Քուրան» պատմվածքում» /«Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածուում՝ թիվ 4/: Մասնակցել է Երևանի պետական համալսարանում կազմակերպված գիտաժողովներին, ընթերցել զեկուցումներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ատեստավորել Գրիգոր Շաշիկյանին:

Օրակարգի **2-րդ հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանին: Վերջինս ամփոփ ներկայացրեց առկա ուսուցման բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներ, նշեց, որ պաշտպանություններն անցել են անաչառ ու անկաշկանդ մթնոլորտում, և չեն գրանցվել շեղումներ: Եվ այդ համապատկերում էլ գոհացուցիչ են արդյունքները:

Քանի որ օրակարգի **3-րդ հարցը** սերտորեն աղերսվում էր նախորդին, դեկանի տեղակալի ելույթից հետո ձայնը տրվեց ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ Բ. Գ. դ., պրոֆ. Գայանե Գևորգյանին: Նա իր խոսքում մասնավորապես ասաց.

« - 2017-2018 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 52 ուսանող, որից 35-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 11-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 6-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝
ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 35 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 23,
լավ՝ 12 ուսանողներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 11 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 8,
լավ՝ 3 ուսանողներ.

լեզվաբանության ամբիոն՝ 6 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 4, լավ՝ 2 ու-
սանողներ:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են 17 ուսանող՝
ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 13 ուսանող, որոնք բոլորն էլ ստացել են «գե-
րազանց» գնահատականներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 2 ուսանող, որոնք ստացել են «գերազանց» գնա-
հատական.

ընդհանուր լեզվաբանության ամբիոն՝ 2 ուսանող, որոնք ստացել են «գերազանց»
գնահատական:

2017-18 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է
պաշտպանել 59 ուսանող: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունք-
ներն են՝ գերազանց՝ 18, լավ՝ 32, բավարար՝ 8, չներկայացած՝ 1:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են 13 ուսանողներ.

հայ գրականության պատմության ամբիոն – 3 ուսանող, որոնցից՝
գերազանց են ստացել 2, լավ՝ 1 ուսանողներ.

նորագույն գրականության ամբիոն - 4 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 3,
լավ՝ 1 ուսանողներ.

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն - 6 ուսանող, որոնք
ստացել են *գերազանց* գնահատական:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցել է գործող ընթացակար-
գին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, տա-
րաբնույթ, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչո-
ղական արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդա-

կույթամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու ու փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ընդհանուր առմամբ մագիստրատուրայի շրջանավարտների գիտելիքները ավելի բարձր էին: Նրանք տիրապետում էին մագիստրոսական աշխատանքների նյութին, մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, իսկ որոշ ուսանողներ աչքի ընկան նյութի խոր իմացությամբ՝ զգալիորեն գերազանցելով պահանջվող մակարդակը: Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական աշխատանքների թեմաներն առավելապես արդիական էին, անդրադառնում էին հայագիտության մեջ վիճահարույց խնդիրների. այդ իրողությունն էլ առավել հետաքրքիր դարձրեց մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը՝ երբեմն վերածելով այն բանավեճի: Աշխատանքների գերակշիռ մասը կառուցված էր նյութի տեսական մասի և գործնական հետազոտությունների համադրմամբ, դրանց մի մասում առկա էին փորձարարական հստակ տվյալներ և այդ տվյալներից ելնելով՝ կատարված էին անհրաժեշտ եզրակացություններ:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապա-

տասխան ամբիոնների կատարած հանգամանակից և երկարատև աշխատանքի մասին: Ամբիոնները մեծ ջանք էին գործադրել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց իրականացման գործում, քանի որ նկատելի էին գիտական խնդիրների, դրանց լուծումների հստակ շարադրում և կիրառում արդի գիտակարգերում: Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ ավարտական և մագիստրոսական աշխատանքները կազմված էին գիտական գրագրության կանոններին համապատասխան: Ընդհանուր առմամբ ցանկանում ենք փաստել, որ համապատասխան ամբիոնների դասախոսները լավագույնս են իրականացրել իրենց պարտականությունները, այն է՝ թեզերի ղեկավարման և գրախոսման աշխատանքները. գրախոսություններում անաչառորեն վեր էին հանված վրիպակներն ու թերությունները, արված էին ուսանելի դիտարկումներ և առաջարկություններ, որոնք օգնում էին հանձնաժողովին աշխատանքը գնահատել ոչ միայն փաստացի թեզի և դրա ներկայացման հիման վրա, այլև գրախոսների կարծիքները նկատի ունենալով:

Հատկապես կարևորում ենք ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի /վարիչ Յու. Ավետիսյան/ կատարած հսկայածավալ աշխատանքը /ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի /մոտ 70/ թեմաները առաջադրված էին այդ ամբիոնի կողմից/: Չնայած աշխատանքների մեծ քանակին՝ ամբիոնի կողմից առաջարկված թեմաներն աչքի էին ընկնում թե՛ արդիականությամբ և՛ թե՛ բազմազանությամբ. առաջադրված էին անգամ հայ լեզվաբանության մեջ չուսումնասիրված թեմաներ, և մագիստրոսներն ու բակալավրիատի ուսանողները հիմնավորված ներկայացնում էին իրենց ուսումնասիրությունները: Հարկ է շեշտել նաև այդ մեծաքանակ աշխատանքների՝ գիտական գրագրությանը համապատասխան ձևակերպված լինելը: Սա փաստում է այն մասին, որ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը, որի վրա էր դրված ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի պատասխանատվությունը, կատարել է հետևողական և ամենօրյա տքնաջան աշխատանք: Ամբիոնում իրականացվել է մագիստրոսական և ավարտական մոտ 50 աշխատանքների քննարկում, որի արդյունքում ապահովվել է դրանց գիտական պատշաճ մակարդակը:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետև ևս ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել զուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրմբռնումներից խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և զուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը: Հարկ է մեծացնել նախնական խորհրդատվությունների քանակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, հստակեցնել աշխատանքի կատարման ընթացքի վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկումների ժամանակ քննարկել ներկայացված թեզի կատարման ծավալը և մակարդակը՝ շեշտադրելով խնդրահարույց հարցերը, մեծացնել դասախոսների պատասխանատվությունը թեզերի հետ կապված աշխատանքների նկատմամբ, կիսամյակային հաշվետվությունների ժամանակ չբավարարվել ուսանողի կողմից ներկայացվող և ղեկավարի կողմից հաստատվող հաշվետվային փաստաթղթով, այլ պահանջել թեզի համապատասխան բաժինների էլեկտրոնային տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2017-18 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացքը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակար-

դակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում»:

Ընթացիկ հարցերում՝

Լ Ս Ե Ց Ի Ն – 2018 թ. բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության հարցերը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ա. Ջրբաշյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Դիլբարյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2017-2018 թթ. ուստարվա շրջանավարտների թվաքանակի սակավության պատճառով կտրուկ նվազել են 2018 թ. դիմորդները, ինչը հանգեցնելու է ԵՊՀ բազմաթիվ ամբիոնների ժամաքանակի կրճատման: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտաբար պետք է իրականացվեն որոշակի միջոցառումներ՝ վիճակը մեղմելու և ԵՊՀ-ում սոցիալական լարվածությունը թուլացնելու նպատակով: Այդ ուղղությամբ արվեցին մի շարք առաջարկներ:

Ելույթ ունեցողները նշեցին, որ տարեցտարի նվազում է նաև մագիստրատուրա դիմողների թիվը, ինչը կապված է մագիստրատուրայի վարձավճարների, երկրում ստեղծված սոցիալական ծանր վիճակի, մագիստրոսական դիպլոմի ոչ հեռանկարային լինելու հետ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - ԵՊՀ ռեկտորատ ներկայացնել իրավիճակը մեղմելուն ուղղված հետևյալ առաջարկները.

1. Միջոցներ մշակել դասախոսների տարեկան ծանրաբեռնվածությունը նվազեցնելու ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսանողների ընդհանուր թվաքանակը 2018-2019 ուստարում ԵՊՀ-ում կրճատվելու է՝ առաջարկվում է պրոֆեսորների ծանրաբեռնվածությունը նվազեցնել 15 %-ով, իսկ դոցենտներինը՝ 10 %-ով:

2. Վերականգնել 60-ից պակաս դասաժամեր ունեցող դասընթացների միջանկյալ քննությունները, որոնց չեղարկումն ազդել է նաև առարկայի յուրացման որակի վրա:
3. Նվազեցնել ուսանողների խմբերի սահմանված թվաքանակը մայրենի լեզվի դասավանդման գործընթացում՝ սահմանելով ոչ ավելի, քան 15-20 ուսանող:
4. Ոչ լիարժեք ընդունելության հետևանքները մեղմելու նպատակով մշակել կոնկրետ մեխանիզմներ առաջին կուրսի դասընթացների հաշվարկները փոփոխելու ուղղությամբ (համապատասխանաբար 2019 թ. նույնը կարելի է անել երկրորդ կուրսում և այսպես շարունակ):
5. Մշակել համապարփակ միջոցառումներ՝ ԵՊՀ-ում դասախոսների կրճատումներից և աշխատավարձերի կրճատումից հնարավորինս ճկուն կերպով խուսափելու համար:
6. Ավելացնել ավարտական աշխատանքների ղեկավարման և գրախոսության համար տրվող ժամերը:
7. Ապահովել մագիստրոսական մի շարք ծրագրերի ընդունելությունը՝ ուսանողների պահանջվող թվաքանակը իջեցնելով նվազագույնը 5-ի, ինչը հնարավորություն կտա ապահովել մի շարք ոլորտներում մասնագետների պատրաստման շարունակականությունը, տվյալ գիտական ճյուղի պահպանումը: Պետք է առաջնորդվել ոչ միայն ֆինանսական, այլև գիտական և կրթական նպատակահարմարություններով: Պետք է նկատի ունենալ, որ բանասիրության ֆակուլտետի շրջանավարտ բակալավրերը լրացնում են մի շարք այլ ֆակուլտետների և կենտրոնների (հոգեբանության, միջազգային, պատմության, մանկավարժության և այլն) մագիստրատուրաները, ինչը նույնպես ներդրում է ԵՊՀ ընդունելության գործընթացներում:
8. Վերանայել քննություններին, ստուգաթքներին, կուրսային աշխատանքներին, մանկավարժական պրակտիկաների ղեկավարմանը տրվող ժամաքանակները:
9. Վերանայել գիտական աշխատանքների համար տրվող հաշվարկները և ժամաբաշխումները:
10. Նվազեցնել մագիստրոսական մի շարք ծրագրերի ուսման վարձը՝ առավել թվով ուսանողներ ներգրավելու նպատակով: Վարձի 20% նվազեցումն էապես կբարձրացնի մագիստրոսների թիվը, կնպաստի որակյալ պրոֆեսորադասախոսական կազմի

պահպանմանը, թույլ չի տա գիտամանկավարժական ներուժի փոշիացում, արտահոսք համալսարանից:

Որոշումն ընդունվեց միաձայն՝ բաց քվեարկությամբ:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և նիստը համարեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ